

ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքապետարանը հայտարարում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Արտամետի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր 1.2-1 թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 05.04.2021

Տիպ՝ [Համայնքային ծառայության թափուր պաշտոններ](#)

Հայտատու՝ Արտամետի համայնքապետարան  
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքապետարանը հայտարարում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Արտամետի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր 1.2-1 թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

1. ՀՀ Արմավիրի մարզի Արտամետի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1):

- ա) ենթակա և հաշվետու է համայնքի ղեկավարին,
- բ) կազմակերպում է աշխատակազմի գործավարությունը, նամակագրությունը, արխիվային
- գործը և աշխատակազմի տեխնիկական սպասարկման աշխատանքները,
- գ) իրականացնում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և ապահովում է նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը,
- դ) կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի , աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշման նախագծերի նախապատրաստմանը,
- ե) կազմակերպում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը,
- զ) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից քաղաքացիների ընդունելությունն ու հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ,
- է) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի կարգապահական ներքին կանոնների նկատմամբ,
- ը) օրենքով սահմանված դեպքում և կարգով մասնակցում է զորակոչի, վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին,
- թ) լուծում է հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ և տալիս հանձնարարականներ:
- ժ) օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյանը:

Աշխատակազմի քարտուղարն ունի պաշտոնի անձնագրով սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխան

պետական ծառայության պաշտոններում առնվազն 2 տարվա ստաժ կամ առնվազն 5 տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն 5 տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող պետական ծառայության դասային աստիճան (կոչում) կամ վերջին 4 տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն 2 տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին 8 տարվա ընթացքում համայնքի ավագանու աշխատանքային գործունեության առնվազն 3տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ;

բ) ՀՀ Սահմանադրության, ՀՀ աշխատանքային օրենսգրքի, ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ Համայնքային ծառայության մասին», ՀՀ Նորմատիվ իրավական ակտերի մասին», ՀՀ Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին», ՀՀ Ձինապարտների մասին», ՀՀ Խնամակալության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու ,տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

գ) տիրապետել անհրաժեշտ տեղեկատվությանը,

դ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Արտամետի համայնքապետարանի շենքում կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչությունում, (ք. Արմավիր Խ.Աբովյան 71) ամեն օր ժամը 9:00-ից մինչև 18:00-ն՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացված փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Արտամետի համայնքապետարանի աշխատակազմ (գ. Արտամետ Արաբոյի փողոց հասցեով հեռ.094-18-42-54), ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (ք. Արմավիր Խ.Աբովյան 71) հեռ.՝ (0237) 2-07-70, (0237) 2-76-49:

Մրցույթը կկայանա 2021 թվականի մայիսի 6-ին ժամը 12:00-ին Արտամետի համայնքապետարանի շենքում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետը 2021 թվականի ապրիլի 21-ին ժամը 18:00-ին:

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ գ. Արտամետ Արաբոյի փողոց 23:  
Հեռ.՝ 094184254: